ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«01» 09 2025թ.
№ գլուխ2/1363

«ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 00170838
ՀՀ, ք.Երևան, Դավթաշեն 4-րդ թղմ., Շ.32/4
հեռ. 094 121 112, 077 62 31 84
էլ. հասցեն՝ megaenergo@bk.ru

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-10/2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն): Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) Ընկերությունը հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 17.01.2025թ. կնքվել է ապրանքի մատակարարման ԳՀԱՊՁԲ-25-10/2-3 ծածկագրով գնման պայմանագիր և պայմանագրին կից 14.03.2025թ. N1 համաձայնագիր (այսուհետև՝ Պայմանագիր):

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ Ընկերության տնօրեն Դավիթ Էդվարդի Մնացականյանին է պատկանում «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ն (ՀՎՀՀ՝ 25295761), որը 2024 թվականի հունվարի 26-ից մինչև 2026 թվականի հունվարի 26-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այս առումով «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերության և «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար Պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 17.01.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/2-3 գնման Պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը **2025թ. սեպտեմբերի 1-ին** միակողմանի ամբողջությամբ լուծել է նշված Պայմանագիրը և պայմանագրին կից 14.03.2025թ. կնքված N1 համաձայնագիրը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 20,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 9-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 20,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2025թ. սեպտեմբերի 9-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 17.01.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/2-3 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով «Էլեկտրական վարդակ՝ միաբևեռ, ներքին մոնտաժի-հողանցումով» ձեռքբերելու դեպքում Ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ